Հայտարարություն Օրհուսի կոնվենցիայի կողմերի հինգերորդ հանդիպմանը

Օրհուսի կոնվենցիայի Կողմ երկրների մեծարգո ներկայացուցիչներ, հարգելի գործընկերներ,

ներքոստորագրյալներս ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն փաստի վրա, որ 2001 թվականին Օրհուսի կոնվենցիայի վավերացումից ի վեր, Հայաստանի կառավարությունը և կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրականացման համար պատասխանատու անձինք ամբողջությամբ ձախողել են կոնվենցիան: 2004թվականից ի վեր Հայաստանի շահագրգիռ հանրության կողմից կոնվենցիայի Համապատասխանության կոմիտե ներկայացված բոլոր երեք դիմումները բավարարվել են՝ արձանագրելով կոնվենցիայի դրույթների լիակատար ձախողում:

Մասնավորապես՝

1. ACCC/C/2004/08 հաղորդակցության արդյունքում Կոմիտեն եկել է եզրահանգման, որ կառավարության կողմից չի ապահովվել շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության հարցում (հոդված 4, կետ 1 և 2), որոշումների կայացմանը հանրության մասնակցության ապահովման հարցում (հոդված 6, կետ 1(a), 2-5 և 7-9, ինչպես նաև հոդված 7), դատական մատչելիության ապահովման հարցում (հոդված 9, կետ 2-4)[1]:

2. ACCC/C/2009/43 հաղորդակցության արդյունքում Համապատասխանության կոմիտեն արձանագրել է կոնվենցիայի դրույթների կիրառման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ձախողումը (հոդված 3, կետ 1), կրկին է արձանագրել որոշումների կայացմանը հանրության մասնակցությունն ապահովելու հարցում կոնվենցիայի խախտումը (հոդված 6, կետ 2, 4 և 9)[2]:

3. ACCC/C/2011/62 հաղորդակցության արդյունքում Համապատասխանության կոմիտեն հերթական անգամ արձանագրել է դատական մատչելիության իրավունքի խախտում (հոդված 9 կետ 2)[3]:

Օրհուսի կոնվենցիայի վավերացումից սկսած՝ շուրջ 13 տարի շարունակ, կոնվենցիայի իրականացման համար պատասխանատու սուբյեկտները հետևողականորեն ձախողել են կոնվենցիայի գրեթե բոլոր դրույթները: Մինչ օրս Հայաստանի կառավարությունը չի

---

[1] http://www.unece.org/fileadmin/DAM/env/documents/2008/pp/mop3/ece_mp_pp_2008_5_add_2_e.pdf

[2] http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/C2009-43/Findings/C43ARMFindings.pdf

[3] http://www.unece.org/env/pp/compliance/compliancecommittee/62tablearm.html

իրականացրել վերը նշված երեք հաղորդակցությունների արդյունքում ներկայացված առաջարկություններից որևէ մեկը: Մասնավորապես,

ա/ տեղեկատվության պատշաճ տրամադրումն ապահովելու համար այդպես էլ չի ներդրվել վիճակագրական մոնիթորինգի մեխանիզմ,

բ/ ընդունված չեն օրենսդրական, կարգավորող կամ վարչական անհրաժեշտ միջոցառումներ ապահովելու համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և որոշումների կայացմանը հանրության մասնակցության ընթացակարգը,

գ/ չեն իրականացվել անհրաժեշտ օրենսդրական և վարչական միջոցառումներ ապահովելու համար շահագրգիռ հանրության (ազդակիր համայնքի բնակիչներ և բնապահպանական հասարակական կազմակերպություններ) կողմից շրջակա միջավայրին վերաբերող հարցերում դատական մատչելիությունը:

Այսպիսով, չնայած Համապատասխանության կոմիտեի և Կողմերի հանդիպման բազմակի և հետևողական առաջարկություններին, կոնվենցիայի իրականացման համար պատասխանատու սուբյեկտները չեն իրականացրել անհրաժեշտ միջոցառումներ ազգային օրենսդրության մեջ, ինչպես նաև վարչական և դատական պրակտիկայում կոնվենցիայով ամրագրված իրավունքների պատշաճ իրականացումն ապահովելու համար:

Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ Օրհուսի կոնվենցիայի պրեամբուլայի համաձայն, այս կոնվենցիայի դրույթների ձախողումը մեծապես ազդում է շրջակա միջավայրին առնչվող այլ միջազգային պայմանագրերի պատշաճ իրականացման վրա: Այսինքն, ձախողելով Օրհուսի կոնվենցիան, Հայաստանի կառավարությունը էականորեն ձախողում է նաև այն միջազգային պայմանագրերը, որոնց շրջանակներում կառավարությունը միջազգային կառույցներից ստանում է հսկայական ֆինանսական միջոցներ: Այս պահի դրությամբ միջազգային կազմակերպությունների կողմից հաստատված են անտառի արդյունավետ կառավարմանը, անապատացման դեմ պայքարին, կենսաբազմազանության պահպանմանը և այլ ձախողված հիմնահարցերին առնչվող 15 ծրագրեր՝ ավելի քան 15 միլիոն դոլար ընդհանուր բյուջեով: Մեր գնահատմամբ, այս ծրագրերի իրականացումը չի կարող արդյունավետ լինել, քանի դեռ Հայաստանի կառավարությունը չի ապահովել Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իրականացումը[4]:

Ավելին, այժմ PensionDenmark դանիական մասնավոր կենսաթոշակային ֆոնդի միջոցների հաշվին և Դանիայի պետական Export Kredit Fonden գործակալության միջնորդությամբ ֆինանսավորվում է Թեղուտի հանքավայրի շահագործման նախագծի մի մասը, որի անօրինականությունը հիմնավորված է Համապատասխանության կոմիտեի երկու

[4] http://www.thegef.org/gef/country_profile/AM?countryCode=AM&op=Browse&form_build_id=form-OxhZS7tukBvarmpC5Wr_IgcrXLwjXsbqeIXJX1E7scE&form_id=selectcountry_form

որոշումներով, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաշվետվության մեջ տեղ գտած փաստերով[5] ինչպես նաև առկա անհերքելի ապացույցներով:

Վերոգրյալի հիման վրա, կոնվենցիայի Կողմերի հանդիպմանը ստիպված ենք առաջարկել «Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության մեխանիզմով»[6] սահմանված կարգով Հայաստանի կառավարության նկատմամբ կիրառել f) կետով սահմանված նախազգուշացում[7] և/կամ g) կետին համապատասխան՝ ժամանակավորապես առկախել Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում Հայաստանին տրված առավելությունները և հատուկ իրավունքները[8], որոնք ներկայացված են Կողմերի առաջին հանդիպման զեկույցում[9]: Ակնհայտ է, որ Օրհուսի կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների հետևողական ձախողմամբ, Հայաստանի կառավարությունը գործնականում ձախողում է նաև շրջակա միջավայրին վերաբերող այլ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները: Այս մոտեցումը պարզորոշ կերպով բխում է Օրհուսի կոնվենցիայի պրեամբուլայի, ինչպես նաև «Միջազգային պայմանագրերի մասին» Վիեննայի կոնվենցիայի բովանդակությունից:

Մենք գտնում ենք, որ Հայաստանի կառավարության նկատմամբ կիրառվող այս միջոցը կարող է պարտադրել կառավարությունը կատարելու ստանձնված միջազգային պարտավորությունները և նպաստել շրջակա միջավայրին առնչվող միջազգային ծրագրերի թափանցիկությանն ու արդյունավետության բարձրացմանը:

Մենք համոզված ենք, որ վերը նշված միջոցների կիրառումը կավելացնի հանրային վերահսկողությունը կառավարության գործունեության նկատմամբ՝ վերջինիս ստիպելով լինել ավելի հաշվետու և բարեխղճորեն ապահովել Օրհուսի կոնվենցիայով ստանձնած մարդու իրավունքների պաշտպանությունը:

---

[5] ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, 2014. http://www.ombuds.am/

[6] UNITED NATIONS ECONOMIC COMMISSION FOR EUROPE, GUIDANCE DOCUMENT ON THE AARHUS CONVENTION COMPLIANCE MECHANISM
http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/CC_GuidanceDocument.pdf

[7] UNITED NATIONS ECONOMIC COMMISSION FOR EUROPE, GUIDANCE DOCUMENT ON THE AARHUS CONVENTION COMPLIANCE MECHANISM.Point f) Issue cautions.

[8] UNITED NATIONS ECONOMIC COMMISSION FOR EUROPE, GUIDANCE DOCUMENT ON THE AARHUS CONVENTION COMPLIANCE MECHANISM. Point g)Suspend, in accordance with the applicable rules of international law concerning the suspension of the operation of a treaty, the special rights and privileges accorded to the Party concerned under the Convention.

[9] REPORT OF THE FIRST MEETING OF THE PARTIES, LUCCA DECLARATION, adopted at the first meeting of the Parties,held in Lucca, Italy, on 21-23 October 2002
http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/mop1/ece.mp.pp.2.add.1.e.pdf

Նամակի տակ ստորագրող հասարակական միավորումներ և անհատներ՝

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն